

«Չարթոն»-ը կարելի է կարդալ նաև համացանցի վրայ

հետեւեալ հասցեով՝

www.zartondaily.com

ինչպես նաև ձեր անհատական թղթակցություններն ու ծանուցումները

կրկնաբար փոխանցել խմբագրության հետեւեալ հասցեներուն՝

e-mail: zartonkadl@gmail.com

P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon

Tel./Fax: +961 1 444225

Էջ 02

Յօդուած

Հաղորդագրութեան Սը Առիթով Կամ «Բան Սը Ըստ Որ Բան Սը Հասկանալ»

Էջ 03

ԹՄՄ-ի Լուրեր

Սոսկերտայի ԹՄՄ-ի Տարեկան Շնորհակալական Դաշտահանութիւն

Էջ 04

Մարզական

ՀԵՆ Անդրանիկ Սեւան Լիբանանի Պատերազմի Աղջկանց Բ. Դասակարգի Ախոյեան

Տեսակին

Հայ Ոստիկանը Հոն Կը Գտնուի Հայ Ցուցարարին Ապահովութեան Հսկելու Եւ Անոր Կեանքը Պաշտպանելու...



Յարգելի ընթերցող մը երէկ իր դժգոհութիւնը յայտնեց, թէ ինչո՞ւ այս սիւնակով տակալին կը յապաղիմ իմ տեսակինէն դիտածս արձանագրելու այստեղ՝ ինչ կը վերաբերի անցեալ Կիրակի առաւօտէն ի վեր Հայրենիքի մէջ տիրող բոլորիս ծանօթ կացութեան:

Նախ յիշեցումի համար պէտք է այստեղ նշել, որ ՌԱԿ առաջիններէն եղաւ, որ դէպքին առաջին իսկ օրէն իր Կեդրոնական Վարչութեան մակարդակով, պաշտօնական հաղորդագրութեամբ մը (որ հրատարակուեցաւ ինչպէս «Չարթոն»-ը) նաեւ ՌԱԿ-ի այլ օրկաններու մէջ, դատապարտեց կատարուած յարձակումը՝ հաստատելով, որ Հայրենիքի մէջ զենքի ուժով փոփոխութիւն կատարելու ամէն փորձ կը հակասէ մեր կուսակցութեան ժողովրդավարական դասանանքին եւ սկզբունքներուն:

Հիմնուելով վերոյիշեալին վրայ կ'ուզեմ առաւել եւս շեշտել, թէ անկախ յարձակումին զօրակցող զգացական կամ թերեւս ալ արդար պոռթկումներէ՝ կատարուած իր ձեւին եւ ժամանակի ընտրութեան մէջ՝ ըստ ինծի աւելի քան սխալ է:

Որպէս Միջին Արեւելքի մէջ ապրող եւ գործող անձ, որ դառն փորձառութիւնը ունի այսպէս կոչուած «Արաբական Գարուն»ին, որ իբր թէ սկաւ ընկերային փոփոխութիւններու արդարացի եւ ժողովրդավար շարժումներով, շուտով արտաքին միջամտութիւններով վերածուելու համար արհեստագործութեան, որուն սկիզբը կը յիշեմ՝ մինչ ատարող տակալին տեսանելի չէ... Հետեւաբար ինծի համար աւելի քան անընդունելի է՝ Հայրենիքը նման կարմիր իրավիճակով մը պատկերացնել:

Կ'ապրիմ Հայրենիքէ հեռու եւ հակառակ յաճախակի այցելութիւններու, բնականաբար չունիմ հայրենի փողովորդին առօրեան կամ անոր ցաւը: Հաւանաբար յարձակման այս ձեւին դիմող տղաքը ունին իրենց յատուկ տրամաբանութիւնը: Բայց պետութիւնն ալ զայն դիմակալելու համար ունի իր տրամաբանութիւնը: Սակայն յետոյ ի՞նչ: Ի վնաս որո՞ւ: Չինեալ այս յարձակումը փորձութեան չի՞ մղեր առարկայական մտտեցումով դիտորդներուն մտածել տալու, որ գէշ փոխադրելու մեղադրանքով ամիսներ առաջ կատարուած ձեռքբերումը կրնայ եւ իրաւական հիմք ունենալ ու ոչ միայն քաղաքական...: Ի վերջոյ նաեւ ինչո՞ւ մոռնալ, որ Հայ ժողովուրդն ու անոր գաւակները՝ յարձակման մասնակցող, անոր զօրակցող կամ զայն դիմակալող կողմ ունին մէկ եւ միակ թշնամի՝ թուրքը:

Ինչո՞ւ ուրախացնել թշնամին: Ինչո՞ւ

Լիբանանէն Լուրեր

Կառավարութեան Ուշադրութիւնը Լիբանանի Վրայ Կեդրոնացած Է



Կառավարութիւնը ընտանեկէ Լիբանանի բնապահպանութեան հարցերը, յետաձգելով հաղորդակցութեանց երկու ընկերութիւններու հետ համաձայնագիրները երկարածելու պարագան: Լիբանանի բնապահպանութեան առաջնահերթութիւն տրուեցաւ երբ ի յայտ եկաւ, որ գետը բարձր մակարդակով ապակաւած է՝ անոր մէջ թափուած մեծ քանակութեամբ աղբի եւ քարահանքերու աւազին ու այլ պատճառներով: Առողջապահութեան նախարար Ռաւէ Ապու Ֆարու պահանջեց, որ գետի երկայնքին գործող քարահանքերը փակուին, որուն հակադարձեցնելը գործող նախարար Նուհատ Մաշնուք ըստելով, թէ Լիբանանի հարցին լուծումը միայն քարահանքերու փակումով չի սահմանափակուիր, այլ կը սկսի անոր բնիւնը վայրէն, անցնելով ամբողջ երթի ընթացքով մինչեւ գետաբերան եւ թէ ինչ ուսումնասիրութիւն մը պահանջած է այս քարահանքերուն կապակցութեամբ, նաեւ կառավարութեան արտակարգ նիստ՝ գետին հարցը ընտանեկէ: Լիբանանի ամենաերկար գետի՝ Լիբանանի ապակաման պարագան անտարբերութեան ենթարկուած է տեղական իշխանութեանց կողմէ գետի ամբողջ երկայնքով, Արեւմտեան Պեքաւայի հովիտէն մինչեւ հարաւային Նապաթիյէ եւ Սուր քաղաքները, ճամբուն վրայ սնելով արհեստական Քարաուն լիճը, որ ներկայիս կիսաչորացած վիճակի մէջ է: Կառավարութիւնը հաղորդակցութեան ընկերութիւններու հետ համաձայնագիրներու երկարածման հարցի ընտանեկէն՝ հաղորդակցութեան նախարար Պութրոս Հարպի հետապնդման յանձնեց, որ այս հարցը ուսումնասիրելէ ետք կառավարութեան տեղեկագիր պիտի ներկայացնէ:

Հարիւրի Եւ Աուն Դատապարտեցին Սուրիացի Ընդդիմադիրներու Կողմէ Պղծեալի Դատանիին Գլխատումը



Սուրաքալու հոսանքի պետ Սաստ Հարիւրի եւ Փոփոխութիւն ու բարեփոխում հոսանքի պետ Սիշէ Աուն դատապարտեցին Սուրիոյ մէջ պաղտասիւնի պատանիի մը գլխատումը՝ ԱՄՆ-ի թիկունքը ունեցող ընդդիմադիրներու կողմէ: «Անոնք որոնք կ'ուզեն Սուրիոյ ժողովուրդին յեղափոխութիւնը Պաշտպանութիւնը գործունէութեան նման ըլլալ, արժանի չեն Սուրիոյ ժողովուրդին պատկանելու պատիւը ունենալու», ըսաւ Հարիւրի «Թուրքի»-ի իր էջին վրայ: Միշէ Աուն ալ ըսաւ, որ պատանիին գլխատումը անմեղութեան սպանութիւնն էր: «Անոր անջատուած գլուխը փրկութիւն պիտի ըլլայ, իսկ անոր աչքերուն մէջ օգնութեան կանչը եւ անոր արիւնիլը աշխարհի գիտակցութիւնը պիտի արթնցնէ», հարց տուաւ ան «Թուրքի»-ի վրայ: Նշեց, որ 12 տարեկան պաղտասիւնի պատանի մը՝ Մահմուտ Սուսա, Սուրիոյ իրաւապահ շնտարար թաղանթանի գաղթականներէն, Սուր ալ Տիւն ալ Չաւեի խմբաւորման զինեակներուն կողմէ գլխատուած էր, Աստի վարչակարգին զօրակցելու ամբաստանութեամբ, որուն նկարահանումը ցուցադրուած էր համացանցի վրայ:

Շրջանային Լուրեր

Թուրքիոյ Մէջ 3 Ամիսով Արտակարգ Դրութիւն Յայտարարուած Է

Անգարայի մէջ կայացած Թուրքիոյ Ազգային անվտանգութեան խորհուրդի ու անոր յաջորդած կառավարութեան նիստէն ետք, Թուրքիոյ նախագահ Ռեճեօ Թայիպ Էրտողան երկիրին մէջ 3 ամիսով արտակարգ դրութիւն յայտարարած է: Այս քայլի իրաւական հիմնարարման համար վկայակոչուած է Թուրքիոյ սահմանադրութեան 120-րդ յօդուածը, կը հաղորդէ Ermenihaber.am-ը: Այսպիսի քայլի դիմելը երկիրին դեկավարը կը մեկնաբանէ՝ ռազմական յեղաշրջման անյաջող փորձի հետեւանքները յաղթահարելու, սպառնալիք լիարժեքօրէն վերացնելու եւ ժողովրդավարութիւնը ամրապնդելու նպատակով:

Ինչպէս կը յայտնէ թրքական «Dogan» լրատուական գործակալութիւնը, ըստ Էրտողանի յայտնած պաշտօնական տուեալներուն՝ Յուլիս 15-ին նախածեռնուած պետական յեղաշրջման ձախողած փորձի հետեւանքով՝ սպանուած են 246 եւ վիրաւորուած 536 արդիկ:

Հայրենի Լուրեր

«Ամէն Ինչ Պիտի Ընենք Խաղաղ Լուծման Հասնելու». Վարչապետ Յովիկ Աբրահամեան



Հայաստանի վարչապետ Յովիկ Աբրահամեան երէկ «անթոյնատրելի եւ դատապարտելի» որակած է այն՝ ինչ որ

տեղի կ'ունենայ Հայաստանի ոստիկանութեան պարեկապահակային ծառայութեան (ՊՊԾ) գունդի տարածքին վրայ: Կառավարութեան նիստի սկիզբը վարչապետը ցանկացած է զոհուած զինուորացիներու վանդակներէն եւ ծառայակից ընկերներէն:

«Բռնութեամբ անհար եւ հասկի իրական փոփոխութիւններու, ան վտանգաւոր եւ անհեռանկար գործընթաց է», ըսած է վարչապետը:

Յովիկ Աբրահամեանի խօսքով իրավիճակը «խիստ մտահոգիչ» է եւ իշխանութիւնը ամէն ինչ պիտի ընէ՝ հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար:

Սերժ Թանքեան Արձագանգած Է Երեւանի Մէջ Տեղի Ունեցող Իրադարձութիւններուն

Հանրայայտ ռոք երաժիշտ, System of a Down ռոք-խումբի մենակատար Սերժ Թանքեան, անդրադարձած է Հայաստանի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն: Ան իր համացանցի էջին վրայ մասնատրաբար գրած է. «Անցնել ափրիկեցի-ամերիկացիներուն սպանութիւնները Միացեալ Նահանգներու մէջ, պետական յեղաշրջման փորձը Թուրքիոյ մէջ, ոստիկանութեան պարեկապահակային ծառայութեան գունդի շէնքի գրումը Հայաստանի մէջ, խաղաղ բնակիչներու սպանութիւնը Ֆրանսայի, Պեքինի, Գերմանիոյ եւ այլ երկիրներու մէջ՝ Իսլամական պետութիւն ահաբեկիչներու կողմէ, աշխարհի մէջ կատարուող ողբերգական իրադարձութիւններու անվերջանալի շարքի մը մէկ մասն են միայն:

«Մեկ բան պարզ է՝ քաղաքակրթութիւնը այն տեսքով, որ գոյութիւն ունի, սպառնած է ինքզինը: Չափազանց կարեւոր է հասկնալ, թէ ինչպէս կարելի է ձեռքազատիլ իրարու հանդէպ բռնութիւն գործադրելէ: Հայաստանի մէջ անհրաժեշտ է որոշել, թէ ինչպէս պետք է դուրս գալ յետ-խորհրդային փտած ստորակարգութենէն, որ կը ղեկավարէ եւ կը քանդէ երկիրը անկախացման օրէն, գրած է երաժիշտը՝ Նշելով, որ «մշակոյթը, կարեկցելու ունակութիւնն ու հաւասարութիւնը կրկնապէս յարցաւ»:

Ան կոչ ուղղած է պայքարելու բացասական երեւոյթներուն դէմ՝ «մտաւոր կարողութիւններով, զսպառնութեամբ եւ արդարացի կերպով»:

ՊՊԾ Գունդի Վրայ Տեղի Ունեցած Գրոհէն Օրեր Ետք Բախումներ Ոստիկանութեան Եւ Ցուցարարներուն Միջեւ

Օրեր անցած են Երեւանի կորուցիցի փողոցին վրայ տեղի ունեցած միջադէպէն, ուր զինուած խումբի անդամներ մուտք գործած են ոստիկանութեան Պարեկապահակային ծառայութեան գունդի տարածք եւ պատանդ վերցուցած քանի մը ոստիկաններ:

Յուլիս 20-ի երեկոյեան ժամը 21.30-ի մօտ բախումներ տեղի ունեցան քաղաքացիներն եւ ոստիկաններու միջեւ: Ցուցարարները սկսան քարեր նետել ոստիկաններուն ուղղութեամբ, իսկ ոստիկանները իբրեւ պատասխան կարգային պայթուցիկներ նետեցին ցուցարարներուն ուղղութեամբ: Ցուցարարները անհաջողակաբար փորձեցին արթնանալ, որոնցմէ 28-ը ոստիկաններ են: 18 հոգիներ տեղափոխուած են շտապօգնութեան ինքնաշարժներով, միւսները անձամբ զացած են հիւանդանոց: Բժշկական ծառայութիւններ եւ օգնութիւն տրամադրուած է բոլորին:

Աւելի ուշ առողջապահութեան նախարարութիւնը իրապարակեց յայտարարութիւն մը՝ հաղորդելով, որ վերոյիշեալ դէպքին իբրեւ հետեւանք, նախնական տուեալներով հիւանդանոցներուն մէջ կան 51 վիրատուներ, որոնցմէ 28-ը ոստիկաններ են: 18 հոգիներ տեղափոխուած են շտապօգնութեան ինքնաշարժներով, միւսները անձամբ զացած են հիւանդանոց: Բժշկական ծառայութիւններ եւ օգնութիւն տրամադրուած է բոլորին:

Վաղ առաւօտեան ժամը 4-ի մօտ Ոստիկանութիւնը կորուցիցի փողոցէն մէկ տասնեակէ աւելի մարդիկ բերման ենթարկեց: Մինչ այդ ոստիկանները երկու անգամ յայտարարեցին, որ քաղաքացիներուն հաւաքը անօրինական է, սակայն քաղաքացիները չցրուեցան: Ոստիկանութեան ներկայացուցիչները քաղաքացիները զգուշացուցին, որ անոնք կը խաղաղօրէն բնակիչներուն անդորրն ու հասարակական կարգը:

Յիշեցնենք, որ Յուլիս 17-ի առաւօտեան խումբ մը զինուած անձինք Էրեբունիի մէջ գործող վերցուցած են ՊՊԾ գունդի վայրը եւ պատանդ առած ոստիկանութեան քանի մը ծառայողներ: Ոստիկան մը՝ Նոյն գունդի փոխորդաւանատար Արթուր Վանոյեանը զոհուած էր այդ գրաման ընթացքին: Վիրաւորուած էին նաեւ չորս ոստիկաններ:

Գիշերը Ոստիկանութիւն Տարուած Են 136 Քաղաքացիներ

Յուլիս 21-ի լուսաղեմին կորուցիցի փողոցին վրայ, ոստիկանութեան կողմէ ոստիկանութեան բաժանմունքներ տարուած են ընդհանուր առմամբ 136 քաղաքացիներ: Այդ մասին Panorama.am-ին տեղեկացուցած են ոստիկանութեան լրատուական ծառայութենէն:

ազատ արձակուած են, միւս մասն ալ «բերման ենթարկուած» կարգավիճակով՝ կը գտնուին ոստիկանութեան բաժիններու մէջ:

Յուլիս 21-ի լուսաղեմի ժամը 4-ի մօտ ոստիկանութիւնը ուժ գործադրած է եւ ցուցարարները հեռացուցած փողոցէն:

Հաղորդագրության Մը Առիթով Կամ «Բա՛ն Մը Ըսե՛ Որ Բան Մը Հասկանա՛ք...»

ՏՈՔԹ. ՃՈՐԾ ԲԱՐՍԵՂՆԱՆ «Չարթօնք»ի աշխատակից

Մեր յարգելի աշխատակիցին այս երգիծական գրությունը հնարովի (fiction) ըլլալով հանդերձ, այնքան ալ հեռու չէ իրականությունէ՝ երբ նկատի ունենանք մեզի հասած կարգ մը ձեռնարկներու նկարագրությունները, անշուշտ այս պարզապիսի հաշուի առնելով նաեւ երգիծական գրութեան մը արտօնելի չափազանցությունը:

«Խմբ.»

Գրական քննադատ չեմ մասնագիտութեամբ, բայց բանի որ բանասերը, լեզուաբանը, գրողը կամ յօդուածագիրը իրենց ապրանքը կ'արտադրեն ինծի եւ նմաններու համար, հետեւաբար որպէս սպառող, այդ ապրանքին վերաբերեալ դիտողություններ ընելու իրաւունք մը ունիմ: Այս հաղորդագրությունը խորքին մէջ գոյութիւն չունի, սակայն նմանները՝ ինչքան, ուր եւ ե՛րբ որ ուզեք...:

Հնդկաստանի ՊոմպէյաՅայ գաղութին կազմակերպած պարահանդեսի մը հաղորդագրությունը կը սկսի այս նախաբանով՝ «Հինաւորը Հնդկաստանի պատմական Պոմպէյ քաղաքի, դղեակատես Ըրաթոն Հիրանոցի, քանդակագործ ու մարմարապատ արքայական արահին մէջ, տեղի ունեցաւ փառապանծ միութեանս աւանդական պարահանդեսը: Զմրուխտապատ ոսկեգօծ հսկայածաւալ ու լուսաւոր ջահերու շողողուն ճառագայթները, հմայց սփռելով կ'արտացոլէին վսեմաշուք ազգայիններու ազնուական ներկայութիւնը, եւ իրենց ազնուափայլ տիկիներուն նրբաճաշակ ոսկեմախշ

զգեստները, աղամանդակու մատանիներն ու ապարանջանները, ինչպէս նաեւ մարգարտաշար վզնոցներն ու մետաքսահիւս ամանային թիկնոցները, որոնց ժանտակագործ փէշերը մաքրամաքուր սալայատակին վրայ հեզասահ ընթացքով մը, կը հասնէին տեղաւորուիլ ոսկեգոյն բազկաթռնեցին թաւածածկ կարմիր փետրալից բազմոցներուն վրայ»:

Ոչ մէկ գոյական բուպիկ կամ մերկ չէ ձգուած, անպայման ածականով մը ծածկուած է, դեռ որոշն ալ մի քանի ածականներով՝ «զմրուխտապատ ոսկեգօծ հսկայածաւալ ու լուսաւոր ջահեր»... արդեօք որքա՞ն էական դեռ ունին այդ ջահերը, որ այդքան ուշադրութիւն եւ տեղ պիտի գտնուէին հաղորդագրութեան մէջ: Գոյականներ՝ որոնք դարձրել ի վեր յոգնած են նոյն ածականը հագնելէ, եւ ածականներ՝ որոնք ոչինչ կ'աւելցնեն իրենց կողքի գոյականին՝ «լուսաւոր ջահեր», արդեօք եթէ սա ջահը լուսաւոր չըլլայ, ջահ կը կոչուի, «ուրախ երանդիսականները» պարահանդեսի մը եկած բազմութիւնը՝ ի՞նչ տրամադրութիւն պիտի ունենայ՝ տխուր, սգաւոր... «մաքրամաքուր սալայատակներ», այսինքն եթէ մէկ մաքուր ըսուի, կամ թէ երբեք սալայատակին մասին նախադասած մը չըլլայ, վատ հո՞տ մը պիտի հասնի ընթերցողին քիմքին, եւ դե՞ս՝ «աղամանդակու մատանիներ», «մարգարտաշար վզնոցներ»...:

Հաւանաբար յօդուածագիրը այս ոճով կը միտի պարահանդեսին ճշգրիտ մթնոլորտը նկարագրել, որպէսզի ընթերցողն ալ վայելէ այդ հեքիաթային պատկերը՝ երեսակայելով ճոխ մանրամասներն ու նրբաճաշակ արդ ու զարդը: Գուցէ նաեւ գրողը տողերուն արևնքը, ընթերցողին ըսել կ'ուզէ, թէ «տես ես որքա՞ն ածականներ գիտեմ, եւ ինչպիսի՞ ճոխ ու ճարտար լեզու եւ գրիչ մը ունիմ, Աճառեանի Հայ արմատական բառարանը կ'ըլլած եմ...»: Լաւ, սեպտեք այս բոլորը ճիշդ են, իր սակցանք որպէս ընթերցող ի՞նչ է, որ տողեր պիտի կարդայ, երբեմն անհասկնալի ածականներու հանդիպելով, իսկ վերջն ալ ձեռնարկին ամբողջական պատկերը առնելու հասնելէս առաջ՝ «երբեմն մասն նախաբանը չաւարտած», մէկ այլ ընթերցման պիտի անցնիմ ընկճուած հոգեբանութեամբ՝ մտածելով, թէ «այս որքա՞ն տկար է հայերենս, որ սա մարդուն գրածը չեմ հասկնար...»:

Խորունկ շունչ մը կը քաշեմ ու կը շարունակեմ կարդալ, վերջապէս այս մարդը յոգնեւ գրեւ է, հետն ալ քանի մը հոգի յոգնեցուցած է՝ թերթի սրբագրիչը, տառաշարը, խմբագիրը, տպարանը, միչէտ իսկ ցրուիչն ու թերթի գանձապահը եւ պատասխանատուն: Հաղորդագրութեան յաջողը մասն մականուններու տարափ մը կը տեղայ, որոնց հազուստի, արդ ու զարդի եւ տիտղոսներու մանրամասն նկարագրութիւններէ ետք, գրողը կ'անցնի անոնց ազգային ու մարդկային արժանիքներու յորդառատ թուարկման՝ «յորդառատը ինձմէ չէ, հաղորդագրութեան մէջէն հոս ինկաւ...»:

Եւ այսպէս՝ «ձեռնարկիս ներկայ էին Տեր եւ տիկ Պահարեանները, որոնք յայտնի են գաղութիս իրենց...: Առանձնաշատուկ էր Հայ իշխանական արմատներէ սերած Տիկին Թաթմահալունիի փայլքը, որուն շողերը հրապիրտներով լցնուն իր սեղանէն անդին անցնելով կը հասնէին...: Վսեմաշուք բարերար, Սփիւռքահայ կարեւորագոյն դէմքերէն, Հայ մշակույթի պահպան ու խթան, ազգային պարծանք՝ Զեփիզմեպէլեան, ըստ սովորութեան մեծաիզգաբար

բարեհաճեցաւ իր իշխանական նուիրատուութիւնը կատարել, սակայն միութեանս խոհեմ ու խելամիտ ղեկավարները «նուիրատուին արտօնութեամբ», գումարին քանակը որոշ ապահովական դրոյթներէ ելլելով յարմար չնկատեցին յայտարարել...»:

Շարադրուած բառերը մեքենայաբար կը կարդամ, սակայն ուղեղս կտրակաւ նապեւ մերժելով կարողացածս վերլուծել, հասկնալ կամ գոնէ յիշուած անունները տեղ մը պահել, հեռախօսային գրոյց մը կ'երեւակայէ այսպէս՝

«- Ընկեր սրբագրիչ, ես ընկեր խմբագիրին հետ երկէ ժողովի ընթացքին խօսեցայ, սիրայօժար համաձայնեցաւ յաջողի համարին մէջ թղթակցութիւնս իջեցնել» կը մնայ, որ դուն քիչ մը շուտ սրբագրես, խմբագրես, վրան ալ եթէ կարելի է աղ ու պղպղէ անլցնես եւ համ տաս, զարդարես... սանկ ձեռքիդ գործը տես, բան մը մի խնայեր, դուն ճոխ բառապաշար ունիս, աւելցուր՝ մի պակեցներ:

- Գիտու վրայ Ընկեր Կարեւորեան, դուք մեր պատուական ընկերն եք, ձեր գրածը կարողացի՞ վարձքերնիդ կատար, արդէն շատ ճոխ եւ փայլուն յօդուած մը գրած եք, բան մը պակաս չէք ձգած, աւելցնելիք բան մը չկայ, եղածով կը սրբագրեմ ու կը խմբագրեմ...:

- Ողջ մնաս, տորեն ալ սանկ բան մը ըրէ, քիչ մը աւելցուր... վերջն ալ անուկիս տակը թուականը չհոռնաս»:

Հասկնալի է, որ թերթ մը վերջապէս գրական արժեք մը ըլլալէ բացի, տնտեսական ձեռնարկ մըն է, խմբագրութիւն եւ հրատարակչութիւն կոչուած հաստատութեան մը գործունէութեան արդիւնքը, որ ունի արտադրող եւ սպառող, հետեւաբար արտադրող շուկայական օրէնքներուն համապատասխան, պարտ է իր սպառող շրջանակը պահել ու հոգալ՝ «խաթիրը տեսնել»: Հայկական թերթի մը համար ստոր լաւագոյն միջոցներէն մէկը, իր սպառողներուն անունները, արժանիքներն ու լուսանկարները տեղաւորելն է էջերուն մէջ, նաեւ «յօդուածագիրներուն խաթիրը չկտրել», այլապէս այդ թերթը ոչ միայն չի ծախուի, այլեւ խստօրէն կը քննադատուի, անիմաստ ու անբովանդակ կը համարուի, իսկ որքան շատ ու փայլուն ըլլան այնտեղ գոյանուններուն կողքի ածականները, այնքան հրաշալի, տեղեկատուութեամբ լցնուն եւ հարուստ կը համարուի այդ թերթը, նուիրատուներն ալ կ'անլուսնան: Լա՛ւ, եթէ ձեռնարկի մը հաղորդագրութիւնը թերթին մէջ ներկայացնելը անհրաժեշտութիւն մըն է, ապա ի՞նչ կը խանգարէ, որ գրողը իր երեսակային ըզուագործէ ո՛չ թէ ածականներու շքահանդէս մը նկարագրելու, այլ նաեւ պարահանդէսը նոր, հետաքրքրական ու հաճելի ընթերցողը ձեռով ներկայացնելու համար:

Հաղորդագրութիւնը զարդարուած է մի քանի գեղատեսիլ տեսարաններով՝ ոչ թէ Մասիս Արարատի, Սեւանի կամ ներկաներէն... արդեօք ասոնց մէջէն ո՞րն է Թաթմահալունի կամ Զեփիզմեպէլեանը, միայն իրենց ու իրենց շրջապատը կրնան զանազանել: Թղթակցութեան տրամադրուած թերթի ամբողջ մէկ երեսին տակի մասը, քանի մը տող պարզապէս մնալու համար՝ տեղեկատուական փոքրիկ պարբերութիւն մը տեղաւորուած է, որ կը թուէ տիպիկ կարեւորութիւն ու բժշկական արժեքը. կը կարդամ. հաւատացե՛ք, այս երկու տողերը ուղեղս անմիջապէս կը իւրացնէ ու տեղ մը կը տեղաւորէ...:

Թուրքիոյ Մէջ Պետական Յեղաշրջումը Դեռ Կը Շարունակուի Եւ Խառն Իրավիճակ Կը Տիրէ

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ

Անցեալ Ուրբաթ շատ հայեր գետնորուած էին լսելով, որ Թուրքիոյ մէջ ռազմական յեղաշրջում տեղի ունեցած է, նախագահ Էրտողանը տապալելու նպատակով:

Պահ մը նոյնիսկ եւ ալ ինկայ ժամանակաւոր բերկրակնի մէջ, մինչ յիշելը, որ թէեւ Էրտողան ֆաշիստ ղեկավար է, սակայն թրքական զինուորականութիւնը շատ աւելի վատ է...: Թուրքիոյ անցած չորս ռազմական յեղաշրջումներու ժամանակ՝ 1960, 1971, 1980 եւ 1997 թուականներուն, հրամանատարներու պայքարը իշխանութեան համար մշտապէս ուղեկցուած է զանգուածային ձեռքաւարկութիւններով, խոշտանգումներով եւ սպանութիւններով: Էրտողան երբեք ժողովրդավարական ղեկավար չէ եղած, սակայն անոր զինուորական հակառակորդները կրնան շատ աւելի վայրագ ըլլալ...: Այս է պատճառը, որ Թուրքիոյ ընդդիմադիր կուսակցութիւններն ոչ մէկը, նոյնիսկ ճնշուած քիւրտերու կուսակցութիւնը չաջակցեցաւ դաւադիրներուն՝ պատկերացնելով իրենց սարսափելի վիճակը ռազմական վարչակարգի լուծին տակ...:

Պետական յեղաշրջման փորձը շուտով ողջունելու փոխարէն, հայերը պետք է ուրախանային Թուրքիոյ ղեկավարի գոյատեւման համար...: Պետք է հաշուի առնել, որ Էրտողանը իսլամական է, մինչդեռ բանալի բարձրաստիճան սպաները՝ ազգայնամոլներ: Էրտողան ի հարկէ քիւրտերու, հայերու, թուրք իրաւապաշտպաններու, լրագրողներու եւ քաղաքական հակառակորդներու բարեկամը չէ, սակայն միւս կողմէ ռազմական իշխանութիւնը կատարեալ մոճաւանջ կ'ըլլար բոլորին համար՝ Թուրքիոյ ներքն եւ անոր սահմաններէն դուրս, մասնաւորաբար դրացի Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի: Կարիք չկայ ետ երթալու մինչէ 1915 թուականի՝ յիշելու համար թրքական բանակի կողմէ 1.5 միլիոն անմեղ հայ տղամարդոց, կիներու եւ երախաներու դէմ իրագործուած ջարդերը...: Իսկ վերջին տարիներուն՝ 1974-ին, Կիպրոս ներխուժման ժամանակ, թուրք զինուորականները նոյն կալի պատերազմական յանցագործութիւններ իրականացուցին՝ հազարաւոր յոյն խաղաղ բնակիչներու նկատմամբ...:

Էրտողանի իշխանութեան ղեկին մնալը կրնայ մեծագոյն նուէրը ըլլալ բոլոր անոնց համար, որոնք կը ցանկան, որ Թուրքիա ծաղիկ առարկայ մնայ ամբողջ աշխարհի վրայ: Անոր ծայրայեղական հայեացքները ընկերային, քաղաքական եւ կրօնական հարցերու վերաբերեալ, հաճելի են միայն անոր արմատական կողմակիցներուն, բայց կը վանեն առողջ դատողութիւն ունեցող մարդիկը:

Երբ Էրտողանի տապալման նախնական լուրը հեռուեցաւ, անոնք որոնք կը տօնէին անոր հնարաւոր հեռացումը սկսան անհիմն լուրեր տարածել, թէ Թուրքիոյ նախագահը անձամբ բեմադրած է այդ յեղաշրջումը՝ իր հակառակորդներէն ձեռքազատուելու համար: Նման արտառոց կարծիքի հաւատալու համար, պետք է անտեսել, որ այդ յեղաշրջումը բեմադրած էր զպալիտեան թուլած ւաւազ սպաներու խումբը՝ Էրտողանի կողմէ ամբողջ տասնամեակ մը զինուորականներու գտումներէ ետք: Հրաշք է, որ սպառնալիքներու տակ ըլլալով եւ հետապնդուելէ, բանտարկուելէ կամ վաղաժամ թշնակի անցնելէ ետք, դեռ իշխանութեան հակառակորդներ մնացել են թրքական բանակի մէջ...: Փորձառու հրամանատարները փոխարինուած էին ոչ արհեստավարժ զինուորականներով, որոնց միակ հմտութիւնը սուլթան Էրտողանի բոլոր ցանկութիւններն ու քնահոնքները ամբողջութեամբ բաւարարելն էր...:

Բացի ասէլ վատ կազմակերպուած էր պետական յեղաշրջումը, որ հնարաւորութիւն տուաւ Էրտողանի խուսափիլ կալան-

քէն, դաւադրութեան մասին վերջին վայրկեանին իմանալով եւ հեռատեսիլով հրահրելով իր մոլեռանդ հետետորդները՝ դուրս ելլելու փողոց եւ դիմակայելու հրետանիները...:

Ամերիկեան լրատուական միջոցները ինչպէս միշտ ապակողմնորոշեցին հասարակութիւնը՝ Էրտողանը բազմիցս անուանելով «ժողովրդավարական ճանապարհով ընտրուած ղեկավար», որ իբր թէ «մեծ թիւով հետետորդներու հասարակութեան լայն շերտերու մէջ» եւ «Միացեալ Նահանգներու կարեւոր դաշնակիցն է Իսլամական Պետութեան դէմ պայքարի մէջ»...: Այս բոլոր յայտարարութիւնները չեն համապատասխաներ իրականութեան: Թուրքիոյ նախագահը ֆաշիստ է, անոր կողմակիցները թէեւ աւելի աղմկարար, քուէարկելու իրաւունք ունեցող քաղաքացիներու հազիւ կեսն են, եւ անոր վարչակարգը Իսլամական Պետութեան ահաբեկիչներուն աջակիցը եղած է...:

Ի՞նչ պիտի պատահի հիմա: Էրտողան պիտի շահարկէ այս հրաշալի հնարաւորութիւնը իր իշխանութիւնը ուժեղացնելու համար, դառնալով աւելի ռիսակալ եւ միահեծան՝ քան առաջ էր, իր երկաթեայ բռնկեցով ջախջախելով բոլոր անոնք, որոնք կը համարձակին չհամաձայնիլ հետը...:

Թուրքիոյ ղեկավարը հիմա յարձակուակօրէն մշտնդէն կը վերցնէ բոլոր կասկածելի հակառակորդները՝ ձերբակալելով հազարաւոր սպաներ, որոնց շարքին 102 հրամանատարներ, եւ աշխատանքէ հեռացնելով ապահովութեան համակարգի 50 հազար պաշտօնեւներ ու դատական համակարգի 3000 անդամներ, որոնք որեւէ կապ չեն ունեցած յեղաշրջման փորձի հետ...: Անոնք ի հարկէ կը փոխարինուին Էրտողանի իւր-հնազանդ ծառաներով, վստահ ըլլալու համար, որ անոր քաղաքական հակառակորդները կ'արժանանան դատարաններու դաժան վճիռներու, ամենայն հաւանականութեամբ մահապատիժի, որ կը բացառէ Թուրքիոյ անդամակցութիւնը Եւրոպական Միութեան...:

Էրտողանի միակ անհասանելի հակառակորդը՝ անոր երբեմնի դաշնակից, իսլամական հոգեւորական Ֆեթիուլլահ Կիւլէնն էր, որ ինքնակամ քարոզած է Ամերիկա եւ կ'ապրի Փենսիլվանիա...: Թուրքիոյ նախագահը կեղծ մեղադրանք կը ներկայացնէ մահմետական հոգեւորականին դէմ՝ անցեալ շաբթուան յեղաշրջման փորձը կազմակերպելու համար, իր գլխաւոր հակառակորդը մշտնդէն վերցնելու նպատակով...: Կը մնայ տեսնել, թէ արդեօք Էրտողան կը յաջողի՞՞ վախցնել նախագահ Օպաման՝ Կիւլէնը Թուրքիոյ յանձնելու...:

Հակառակ թրքական կառավարութեան կեղծ գեկոյցներուն՝ յեղաշրջումը ամբողջովին չէ ճնշուած: Յեղաշրջման մեկնարկէն հինգ օրեր անց, Էրտողան դեռ փակուած է Սթամբուլի մէջ՝ չկարողանալով վերադառնալ Անգարայի իր հսկայական դատարկ պալատը...:

Բոլոր անոնք, որոնք յոգնած են Թուրքիոյ միջամտութիւններէն դրացի երկրներու գործերուն, ի հարկէ կը նախընտրեն, որ երկրագնդէն ներքիշխանական բախումները դաւադիրներու եւ բռնաորդական վարչակարգի ղեկավարութեան միջեւ: Այդ կը ստիպէր Թուրքիոյ զբաղիլ իր ներքին խնդիրներով՝ նուազեցնելով Հայաստանի խնդիրներուն, Արցախի, Կիպրոսի, Յունաստանի, Իրանի, Իրաքի եւ Սուրիոյ անվտանգութեան սպառնալու անոր կարողութիւնը...:

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան Արեւմտահայերէնի վերածեց՝ Մեղա Գրիգորեան

TheCaliforniaCourier.com

Pour vos lunettes progressives
BOGHOS OPTIC
Autoroute Jdeideh
Tel.: (01) 870016 - (03) 194688

Տեսանկյան
Էջ 01
Հայ Ոստիկանը Հոն Կը Գտնուի Հայ Ցուցարարին Ապահովութեան Հսկելու Եւ Անոր Կեանքը Պաշտպանելու...
միջազգային լրատուութեան ուշադրութիւնը Անգարայի իրադարձութիւններէն դէպի Երեւան շեղեցնել: Ինչո՞ւ վստայեալ արդէն իսկ Հայրենի տկար տնտեսութեան՝ այն ալ ամանային զբօսաշրջիկութեան եղանակին: Ինչո՞ւ գէնքը ուղղել իւրայինի կուրծքին՝ ի տես Հայրենիքի եւ Արցախի ապահովութեան ու նաեւ գոյութեան սպառնացող ազդակներուն...:
Իրապէ՛ս սպառած է ամեն ժողովրդավարական միջոց՝ քաղաքակրթօրէն ընկերային փոփոխութիւն յառաջացնելու Հայրենիքի մէջ: Պայման է թշնամին ուրախացնել: Այս օրերուն սիրելի ընթերցող, կը հետեւի՛ս ազդելիճանական համացանցային զանգուածային լրատուական միջոցներու ապրած ճնճութեան՝ երբ կ'արտայայտուին Երեւանի դէպքերուն մասին...:
Ամօ՞ք մեզի:
Ի վերջոյ տեսե՛ք վերի նկարը, որ համացանցի մէջ լայն ընդունելութիւն գտած է՝ նամանաւանդ ընդիմութեան համակիրներուն կողմէ: որուն մէջ Հայ զինուորին հետ գիրկընդիսանաւոր Հայ օրիորդը հարց կու տայ անոր, թէ «որն կը կրակէ՞ս վրաս եթէ քեզի այրպէս իրահանգուի», Հայ ոստիկանը կը պատասխանէ՝ «չեմ կրակել»:
Թոյլ տուր ինծի սիրելի ընթերցող, որ վերի նկարը վերլուծեմ իմ տեսանկյանէս. հայ ոստիկանը անշուշտ, որ պիտի չկրակէ հայ օրիորդին վրայ, որովհետեւ ան ի վերջոյ այդ վայրին մէջ կը գտնուի ոչ թէ հայ ցուցարարին վրայ կրակելու, այլ անոր ապահովութեան հսկելու եւ կեանքը պաշտպանելու...:
ՍԵՒԿ ԶՎԱՌԵԱՆ



Պատմութեան Մէջ Այսօր
ժագ Ժերմեն Սուֆլօ

Մեր թուականէն 313 տարիներ առաջ՝ 22 Յուլիս 1713-ին ծնած է Ժագ Ժերմեն Սուֆլօ. ֆրանսացի ճարտարապետ, 18-րդ դարու դասականութեան յառաջատար ներկայացուցիչներէն:

Ժագ Ժերմեն Սուֆլօ ուսանած է Հոնմ 1734-1737-ին: 1730-ական թուականներուն այցելած է Փոքր Ասիա, 1750-ին

ուսումնասիրած ու չափազարած է Սիկիլիոյ եւ Պետուսի հին՝ անթիք յուշարձանները: Աշխատած է Լիոնի Օթել Տիօ հիւանդանոցը 1741-1742, ապա Փարիզի մէջ 1755-էն:

Ժագ Ժերմեն Սուֆլօյի հիմնական գործը Փարիզի Ս. Ժնեւի եկեղեցին է 1758-1790, որ 1791-էն Պանթէոն է: Մե-

ծածաւալ, գմբեթածածկ, դասական ոճով այս կառոյցը ուշագրաւ է ձեւերու կրթողականութեամբ, կարուցողական համարձակ լուծումով (մեծաթիւ գմբեթը կը հեծի 4 թեթեւ, եռանկիւտ մուկերու վրայ):

Ժագ Ժերմեն Սուֆլօ մահացած է Փարիզ 29 Օգոստոս 1780-ին:

ԹՄՄ-ի Լուրեր

Մոնթրեալի ԹՄՄ-ի Տարեկան Շնորհակալական Դաշտահանդեսը

Ամեն տարուայ գեղեցիկ սովորութեան համաձայն, այս տարի եւս Մոնթրեալի ԹԵՔԵԱՆ Մշակութային Միութեան վարչութիւնը, անդամական եւ համակիր վայր շրջանակի մը մասնակցութեամբ, գնահատական ընդունելութեամբ մը շնորհակալութիւն յայտնեց՝ զանազան մշակութային մարզերէ ներս բեղուն ու պատուաբեր աշխատանք կատարող անհատներու եւ յանձնախումբերու: 2րդ տարին է, որ այս հանդիսութիւնը կը կատարուի «ԹԵՔԵԱՆ Պուրակ»-ի սահմանափակ իրաւունքով միջավայրին մէջ, ամառնային գեղեցիկ օր մը՝ Կիրակի, 17 Յուլիսին, փոխանակ կեդրոնի սրահին:

Համը խորովածներու (պատրաստութեամբ Ռուբէն Նշանեանի), ըմպելիներու, երաժշտութեան եւ այլ քաղաքներէ եւս ներկաներու ընտանեկան ջերմ ու հաճելի մթնոլորտի մէջ, հին ու նոր ծանօթութիւններ օրուան տաղտուկներէ հեռու՝ ուրախ միջավայր մը ստեղծեցին միևնույն երեկոյան ժամերը:

Մոնթրեալի ԹՄՄ-ի վարչութեան ուժական ատենապետ Արթուր Մանուկեան, իր ոգեւորող ելոյթներով անդրադարձաւ օրուան իմաստին՝ գնահատանք եւ շնորհակալութիւն յայտնելու զանազան յանձնախումբերու եւ անհատական միջոցներով՝ բարեխառն ու արդիւնաբեր տարի մը եւս բոլորած ըլլալու ուրախութիւնը պարգեւած ըլլալու: Արդարեւ բաղնաւորութեամբ անցնելով, վերջին տարիներու անարժանազանութիւնները շարունակական վերելք՝ ձեռնարկներու եւ գործունէութիւններու թիւի ու որակի առումով: Յատկապէս անցնող մէկ տարին յատկանշուած էր անսխալութեամբ կատարուած

ներով: Առաջին հերթին այս տարեշրջանի սկզբնաւորութեան յաջողութեամբ աւարտած էր համակարգչային լրատուամիջոցը՝ Abakanews.com online համացանցային ամենաարդիական լրատուութիւնը, որ օրը օրին բազմահազար ժողովուրդի կը հասցնէ գունազարդ ամենաթարմ լուրերը: Այս ծրագրի գլխաւոր իրակաւացնողը եղաւ երիտասարդ գիտնական եւ ճարտարապետ Արա Եազեան, որ արժանացաւ այս տարուան ԹՄՄ-ի ամենաբեղուն անդամի պարգեւին: Այս էլէկտրոնիք արդիական դրութեան կողքին կը շարունակուի «Ապագայ» տպագրեալ շաբաթաթերթի հրատարակութիւնը, հակառակ բազմաթիւ նիւթական եւ գործնական դժուարութիւններու, շնորհիւ նուիրեալ անձնակազմի մը ճիգերուն:

Մեր «Հայ Բեմ» թատերախումբը մեծ ուսումնասիրով կը շարունակէ իր յառաջընթացը ոչ միայն հայ համայնքէն ներս, այլ պատուաբեր մրցանակներու կը տիրանալ տեղական և արտասահման թատերական մրցոյթներու մէջ, որպէս լաւագոյն հինգ թատերախումբերէն եւ բեմադրիչներէն մին, իսկ լաւագոյն երիտասարդ դերասանը, Քեպէ Նահանգի հարիւրաւոր խումբերէն՝ կը հանդիսանար Արտէն Արաբեանը: Մեր բեմադրիչը՝ Նանսի Իսաա Թորոնթոն կը ստանար առաջնութեան մրցանակ Մոնթրեալ քաղաքի բոլոր բեմադրիչներուն մէջ: Մեղեդի Արդուեանն ալ արտասահման հասած էր Քեպէ Նահանգի իբրէն լաւագոյն 15 դերասանուհիներու կարգին: Արտէնը, Մեղեդին եւ Նանսին արժանացած էին պատուոյ տախտակներու եւ մրցանակներու: Հայ Բեմի 90ի մօտ աշխատակիցներուն զաղտիկ քուէներու մեծամասնութիւնը

թեամբ, թատերախումբի անցեալ տարուան ամենաարժանի անդամը ընտրուեցաւ Յակոբ Ռեճեպեանը, որ ձեռնարկ արեւելահայկերէն ստացաւ այս նպատակին յատկացուած յուշատախտակը: Նանսին այս ամառ ստանձնած է նաեւ մանուկներու ամառնային ճամբարը, որ արդէն իսկ մեծ յաջողութեամբ սկսած է իր առաքելութեան:

Ատենապետ Արթուր Մանուկեան գնահատանքով անդրադարձաւ վերջերս հաստատուած «Պրիմ» թղթախաղերու դասաւանդման, գլխաւոր ուսուցչութեամբ արն. Մարտիրոս Ճանճանեանի եւ օգնութեամբ Տոքթ. Հրայր Տէր Գեորգեանի, պատանեկան ճարտարակի (chess) դասընթացներու, դեկլարութեամբ պատանի Երուանդ Տէմիրճեանի, որ վերջերս կազմակերպած էր յաջող մրցաշար մը, ինչպէս նաեւ կազմութիւնը ընկերային յանձնախումբին:

Ատենապետ Արթուր Մանուկեան երախտագիտութեամբ անդրադարձաւ բազմադաս Տիկնայի Միութեան, որոնք տարեկան պազարի եւ այլ առիթներով՝ իրենց աշխատանքով ու նուիրումով կ'ապահովեն նիւթական եւ բարոյական պատկառելի հասոյթ մը, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք անսակարկ ու տընջան աշխատանքով յաջողոցնին այս դաշտահանդեսը:

Վարձքը կատար բոլոր անձուներ աշխատողներուն, որոնք կը պատուեն ԹԵՔԵԱՆի արձանագրած յաջողութիւններու առիթով բաժինը: Կը մաղթենք ուժ եւ կարողութիւն, որ անոնք անկույն շարունակեն ազգանուէր այս գործունէութիւնները:

Պատանիներու Ճատրակի Հիանալի Մրցաշար Մոնթրեալի ԹԵՔԵԱՆ Կեդրոնէն Ներս

ՍԱՐԳԻՍ ԳԱՎՈՒՅԵԱՆ

«Ապագայ» շաբաթաթերթի ընթացիկ տարուան Յունիս 20-ի թիւով, բաւական մեծածաւալ, կարելի է ըսել սփիւռքահայ համայնքներու համար հազուադէպ յայտարարութիւն մը դրուած էր: ԹԵՔԵԱՆ Մշակութային Միութիւնը իր կեդրոնէն ներս՝ Յունիսի 1-ին կը կազմակերպէր ճատրակի մրցաշարը, որուն կրնային մասնակցիլ մինչեւ 15 տարիքը բոլորած պատանիներ: Մուտքը ոչ միայն ազատ էր, այլ նաեւ մրցոյթի արարտին նախատեսուած էր հիւրասիրութիւն, նշուած էր պատասխանատուի անունը՝ Երուանդ, առանց մակնուսի, նաեւ հեռաձայնի թիւ մը:

Մօտ 2 տարիներ առաջ ստեղծուած Լավալի ԴՄՄ-ի ճատրակի խումբը բաւական ճամբայ կտրած է, ուր 7-15 տարեկան պատանիներ ամեն շաբաթ օր, Լավալի Հայ կեդրոնէն ներս կանոնադրաբար կը հետեւին ճատրակի դասընթացներուն, աստիճանաբար ծանօթանալով այս հիանալի, շատ օգտակար ու մարդու միտքը պայծառացնող խաղի գաղտնիքներուն: Անոնք որոշ պատրաստութիւն մը ձեռք ձգած են արդէն, եւ ահա առիթ է, որ իրենց ամբարած գիտելիքներով մասնակցին այս մրցաշարին: Հեռաձայնեցի Երուանդին եւ տուի քանի մը պատանիներու անուններ, որոնք դեռ արձակուրդի չէին մեկնած:

Մրցաշարի օրը ԹԵՔԵԱՆ կեդրոնի սրահը ստացած էր շատ տպաւորիչ տեսք: Ութը երկարաուսն սեղաններ շարուած էին սրահին կեդրոնը՝ կազմելով բաւական լայնատարած քառակուսի մը: Իւրաքանչիւր սեղանի վրայ դրուած էին երկու ճատրակի մրցախաղի սարք, եւ այդպէսով միաժամանակ կրնային խաղալ 32 պատանիներ: Իսկ մեծ պատասառի վրայ կարելի էր տեսնել հայ ժողովուրդի ճատրակի կուռք՝ Տիգրան Պետրոսեանի հսկայ յուսանկարը:

Մանրակազմ, բարեկիրթ, շատ հաճելի դէմքով ու միայն հայու յատուկ գեղեցիկ աչքերով, ու դեռ հազիւ պատանեկութեան սեմէն դուրս եկած մէկը կը պոզուեր սրահին մէջ, ձեռքին թուղթի մը վրայ կը նշանակէր ներկայացած մասնակցներուն անունները: Ենթադրեցի, որ ան պիտի գիտնար թէ ո՞ր կարելի էր գտնել յայտարարութեան մէջ նշուած Երուանդը, քանի որ իրեն անձամբ կ'ուզէի ներկայացնել այն տղայը, որոնց անունները խնդրած էի արձանագրել հեռաձայնով:

Երբ հարցուցի, թէ ո՞ր կրնամ գտնել պարոն Երուանդը, ի գարնան ինձի ըսաւ, թէ ի՞նչ էր Երուանդը: Ապա՝ Եհ, որովհետեւ մեր հայ համայնքներուն մէջ, ընդհանրապէս ընդունուած է յայտարարութիւններուն մէջ ղնել վարչականներէն մէկուն կամ միւսին եւ կամ՝ կազմակերպող յանձնախումբի անդամներէն

մէկուն անունն ու հեռաձայնի թիւը, որոնք ինչպէս գիտնէք մեծաւ մասամբ դպրոցական տարիքի չեն ըլլար:

Երուանդին կ'ընկերանային երկու օգնականներ՝ Յակոբ եւ Նարոտ Միսնասեանները:

Մեծ աշխուժութեամբ սկսան խաղերը: 7-14 տարեկան 26 տղայ ու աղջիկներ գոյգեր կազմած կը մրցէին իրարու դէմ: Մրցաշարը դիտելու եկած էին ոչ միայն մասնակցող պատանիներու ծնողքն ու բարեկամները, այլ նաեւ ճատրակի բազմաթիւ սիրահարներ:

Շատ տպաւորիչ ձեռնարկ էր, լաւ կազմակերպուած ու նորօրէն մտածուած, թէ ինչպէս պարզեաւորել մասնակցները: Ոչ ոք առանց պարգեւի մնաց: Համաձայն այս մրցաշարին իրենց արձանագրած յաղթանակներու քանակին, ճատրակի դասերուն ցուցաբերած հետեւողական մասնակցութեան եւ ճատրակի նկատմամբ ունեցած նուիրումն առաջնութեան, բոլոր մասնակցները ըստ արժանաւորակների գնահատուեցան ոսկի, արծաթ եւ պրոնզ մետալներով:

Իսկ երեք պատանիներ՝ 7 տարեկան Քրիստափոր Փիլանտեան, 12 տարեկան Սագո Կարապետ եւ Եօդէն Կայաբալեան, յաղթելով իրենց բոլոր հակառակորդներուն տիրացան յատուկ բաժակներով:

Նորութիւն մը չէ հաստատելը, որ երբեմն անձի մը նախաձեռնութեան ոգին, երբ անոր կը միանան կազմակերպելու ձիրքն ու տեսլականը, կրնան իրականացնել ծաւալուն գործեր: Ահա սափիկ Հալեպէն վերջերս հասած այս 16 տարեկան պատանին՝ Երուանդը, գրեթէ առանձին կրցած էր ոգեւորել ու ներգրգրել հայ պատանիները ճատրակի աշխարհին մէջ, ստեղծելով խանդավառ ու հաճելի մթնոլորտ:

Մրցոյթի աւարտէն ետք մօտեցայ Երուանդին եւ շնորհակոթեցի զինք, այս շատ յաջողած ճատրակի մրցոյթը իրականացնելուն համար:

Կ'ուզեմ ընթերցողին սիրով ներկայացնել Տէմիրճեան Երուանդը:

Ծնած է Հալեպ, 1998-ին: Յաճախած է ՀԲԸ Միութեան Լ. Նաճարեան - Գ. Կիւպենկեան Վարժարանը մինչեւ 10-րդ կարգ: Սուրիոյ մէջ բռնկած պատերազմի պատճառով, 2014-ին ընտանիքին հետ կը հաստատուի Մոնթրեալ: Մէկ տարի կը հետեւի ֆրանսերէն լեզուի դասընթացներուն, եւ այս ուշիմ ու աշխատասէր աշակերտը յաջողութեամբ կ'ընդունուի Մոնթրեալի Սք. Յակոբ վարժարանի 10-րդ դասարանը, որուն ընթացքը գալ տարի աւարտելէ ետք, նպատակադրած է մասնագիտանալ համակարգչային գիտութեան մէջ (Computer sciences):

Ճատրակ խաղալու սկսած է 6 տարեկանէն իր գարմիկին օգնութեամբ: Այնուհետեւ 8 տարիներ կանոնաւոր կերպով հետեւած է Հայաստանէն որպէս ուսու-



ցի Հալեպ հաստատուած ճատրակի մասնագետ պարոն Արթուրի ճատրակի դասընթացներուն: Հմտանալով անոր գաղտնիքներուն, իր բարձրորակ խաղով, տարիներ շարունակ կ'ընտրուի Սուրիոյ դպրոցականներու ճատրակի առաջնութեան մասնակցող Հալեպի հաւաքականի անդամ: Երուանդը հպարտութեամբ կը Նշէ, որ Հալեպի հաւաքականի խումբը կազմող 5 դպրոցականներէն 3-ը միշտ հայեր եղած են: 2009-ին շնորհիւ Երուանդին ու իր հայ ընկերներուն հիանալի խաղին, Հալեպի խումբը կը գրաւէ Սուրիոյ բոլոր խումբերուն մէջ 4-րդ պատուաւոր տեղը:

ԹԵՔԵԱՆ Մշակութային Միութեան Մոնթրեալի վարչութիւնը տեղեկանալէ ետք իր կարողութիւններուն, իրեն կ'առաջարկէ ճատրակի խաղեր կազմակերպել Սեւան Ամառնային ճամբարի աշակերտներուն համար: Նկատելով հետզհետէ աշակերտներուն եւ անոնց ծնողներուն մօտ աճող հետաքրքրութիւնը ճատրակի հանդէպ, Երուանդը վարչութեան կ'առաջարկէ կազմակերպել դասընթացներ: Վարչութեան աջակցութեամբ ու ստատումով, անոր աշակերտներուն թիւը օրէ օր աճ կ'արձանագրէ եւ այսօր կը հասնի 20-ի:

1987-ին Վարդան Բալասանեանը, Համօ Ապալեանը, Կիզիւն Արդարեանն ու Սարգիս Գալուբեանը, ԹԵՔԵԱՆի նորակառուց կեդրոնին մէջ ստեղծած էին ճատրակի խմբակ, որ կը կրէր Տիգրան Պետրոսեանի անունը: Տարիներ շարունակ ամեն երկուշաբթի, ճատրակի խաղալու համար ամեն տարիքի բազմաթիւ հայորդիներ կը հաւաքուէին՝ ճատրակի խմբակին տրամադրուած «սոլարիում» մէջ: Այդ խմբակէն շատեր նուիրուեցան Ալեք Մանուկեան վարժարանի աշակերտներուն ճատրակի դասաւանդման:

Եւ ահա շնորհիւ Երուանդ Տէմիրճեանին, ճատրակը նոր շունչ կը ստանայ ԹԵՔԵԱՆի կենդրոնէն ներս: Կը շնորհաւորենք ԹԵՔԵԱՆ Մշակութային Միութեան վարչութիւնը, հայ պատանիներու մտային զարգացման մեծապէս նպաստող ճատրակին կարեւորութիւնն տուած ըլլալուն համար:


Յատուկ նորհաւորանքներ բոլորի սիրելին դարձած Երուանդին, իր կատարած շատ գնահատելի գործին համար:

«Ապագայ»

Ցեղասպանութիւն 100 + 1

Ամերիկացի Ցեղասպանագետը ԱՄՆ-ի Նախագահի Թեկնածուներուն Հայոց Ցեղասպանութիւնը Ճանչնալու Կոչ Կ'ընէ

ԱՄՆ-ի նախագահի թեկնածուները պետք է արտայայտեն իրենց յստակ դիրքորոշումը Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ:



Այս մասին յայտարարած է անկախ հետազոտող, Չորեան հիմնարկի Ցեղասպանութիւն եւ մարդու իրաւունքներու համալսարանական ծրագրի անդամ եւ «Ցեղասպանագիտութիւն» միջազգային ամագիրի նախկին խմբագիր Սամուէլ Թոթեն, Չորեան հիմնարկի պաշտօնական կայքին տուած հարցազրոյցին մէջ:

«ԱՄՆ-ը տասնամեակներ շարունակ խուսափած է Հայոց Ցեղասպանութեան ճանաչումէն եւ կը շարունակէ այդ մէկը ընել՝ ելլելով քաղաքական նպատակաւորմարութենէ: ԱՄՆ-ի նման դիրքորոշումը ուղիղ հակառակն է Գերմանիոյ օրինակին: Յունիս 2-ին Գերմանիոյ խորհրդարանը ոչ միայն ընդունեց իր իսկ ազգի ներգրաւուածութիւնը՝ 1915 թուականի դեպքերուն, այլ նաեւ անուանեց մարդկութեան այս ողբերգութիւնը իր անունով՝ Ցեղասպանութիւն: Պունտսթայիկ քուէարկութիւնը պետք է ծառայէ որպէս վառ օրինակ միւս ազգերուն համար, որոնք տակաւին նոյն դիրքորոշումը ունին, ինչպէս ԱՄՆ-ը», «Արցախ-փլորես»-ի փոխանցմամբ ըսած է ան:

Ցեղասպանագետին խօսքով ԱՄՆ-ի այժմեան կառավարութիւնը պետք է օրինակ վերցնէ անցեալէն:

«Ան կրնայ արժեքներ որդեգրել իր նախնիներէն, մասնաւորաբար դեռ Ցեղասպանութեան տարիներուն օսմանեան Թուրքիոյ մէջ ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորկընթաունէն, որ տեղեկացուցած էր այդ ժամանակ ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռոպերթ Լանսինկին հայերու սպանդին մասին: Այդ ժամանակներէն ի վեր Մորկընթաուն եւ ԱՄՆ-ի կառավա-

րութիւնը սկսան աշխատանքներ տանիլ տարբեր ուղղութիւններով: Երկրորդ համաշխարհային պատերազմէն յետոյ այդ մեծածաւալ ջանքերը ուղղուած էին միլիոններու հասնող դամախաւքներու կազմակերպման եւ կարիքաւորներու տրամադրման: Այլ խօսքով ԱՄՆ-ի կառավարութիւնը եւ ամերիկացիները կը խորհրդարանը ոչ միայն ընդունեց իր իսկ ազգի ներգրաւուածութիւնը՝ 1915 թուականի դեպքերուն, այլ նաեւ անուանեց մարդկութեան այս ողբերգութիւնը իր անունով՝ Ցեղասպանութիւն: Պունտսթայիկ քուէարկութիւնը պետք է ծառայէ որպէս վառ օրինակ միւս ազգերուն համար, որոնք տակաւին նոյն դիրքորոշումը ունին, ինչպէս ԱՄՆ-ը», «Արցախ-փլորես»-ի փոխանցմամբ ըսած է ան:

Սամուէլ Թոթենի կարծիքով՝ ԱՄՆ-ի այժմեան դիրքորոշման պատճառը թերեւ՝ Թուրքիոյ ճշմունքներուն տուրք տալն է:

«Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը այժմ արդէն ԱՄՆ-ի համար պարզապէս քարոյական հարց չէ, այլ երկիրի արժանահատուածութեան: Ինչպէս կրնայ ԱՄՆ-ը դատապարտել այլ երկիրներու մէջ իրականացող մարդու իրաւունքներու խախտումները, կիրառել պատժամիջոցներ, երբ ան չի կրնար ազնուօրէն առեւտուիլ անվիճելի պատմական փաստի հետ: Նախագահ Օպամայի համար ոչ չէ փրկել իր համբաւը եւ արժանահատութիւնը երկիրին հանդէպ՝ միջազգայնօրէն ճանչնալով Հայոց Ցեղասպանութիւնը: Այս է ճիշդ ժամանակը», ընդգծած է Սամուէլ Թոթեն:

Սփիւռքահայ Կեանք

Իրան

«Իմ Հայաստան» Փառատօնին Մասնակցող Նոր Զուղայի «Արարատ» Միութեան Պատուիրակութիւնը Հայաստան Մեկնեցաւ



Նոր Զուղայի հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան մշակութային միաւորի պատուիրակութիւնը, Յուլիս 21-ի առաւօտեան Հայաստան մեկնեցաւ՝ մասնակցելու Յուլիս 22-ին մեկնարկող «Իմ Հայաստան» համահայկական փառատօնին: Այս մասին «Հայերն Այսօր»-ին կը յայտնէ Նոր Զուղայի Հայ ՄՄ «Արարատ» միութեան թղթակից Երանուշ Թահմազեան:

Պատուիրակութեան ընդհանուր թիւը 12-է, որուն մաս կը կազմեն «Կռունկ» պատանեկան խումբը, մշակութային միաւորի վարչութեան ներկայացուցիչներ Զարմէն Դեւեան, Նայիրի Այվազեան, միաւորի «Կռունկ» պարախումբի ղեկա-

վար եւ պարերու բեմադրիչ Նուրէ Մկրտչեան եւ փորձավար Քրիստինէ Յակոբեան:

Փառատօնի բացման հանդիսութեան ընթացքին, խումբը հանդէս պիտի գայ Սայթես Նովայի «Նազակի» երգի ներքոյ, իսկ փառատօնի ընթացքին կը ներկայացնէ՝ Անուշեւ Ինգա Արշակեաններու «Մենք ենք ու սարերը մեր», գուսան Շերամի «Շորորա», Սայթես Նովայի «Նազակի», Խաչատուր Աւետիսեանի «Էրզրու մի շորոր» եւ ժողովրդական «Վերվերի» խմբային պարերն ու մենապարերը:

Նշելի է, որ պատուիրակութիւնը մեկնելէ առաջ ստացաւ Տ. Խաչատուր քահանայ Չարքարեանի օրհնութիւնը: Վերջաւորութեան պահպանիչ արջօթով անոնց բարի երթ մաղթեց քահանայ հայրը:

Բարի երթ մաղթելու համար ներկայ էին նաեւ միութեան Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչներն ու ծնողները:

Լիբանանի «Ճինիշեան Յիշատակի Չեմուրկ»

Հաստատութեան 50-ամեակի Հանդիսութիւն

Ուրբաթ, 22 Յուլիս 2016-ին, երեկոյան ժամը 8:00-ին, Ազգային Առաջնորդարանի «Երջո Սամուէլեան-Երազյան» հանդիսարանին մէջ, Պուրճ Համառ:

<Րաւէր

Մարզական

Չեմպիոնը Լիկի Բ.Նախապատր.Հանգրուան

Սելթիք եւ Ռոզընայրը Անցան Յաջող Հանգրուան

Չեմպիոնը Լիկի Բ.Նախապատրաստական հանգրուանի դարձի մրցումին, Սկոտլոնդի ախոյեան «Սելթիք»ը իր դաշտին վրայ 3-0 հաշիվով յաղթեց Ճիպարայթարի ախոյեանին եւ անցաւ յաջորդ հանգրուան: Երթի մրցումին սկոտլանդական խումբը պարտուած էր 0-1 հաշիվով: Իսկ Սակեդոնիոյ Սքոփիէի «Վարտար»ը դարձեալ զիջեցաւ «Տիւամօ Չակրեայ»ին եւ դուրս մնաց պայքարէն: Հայաստանի հաւաքականի անդամ Յովհաննէս Համբարձումեանը մասնակցեցաւ ամբողջ մրցումին «Վարտար»ի կազմէն: Այս հանգրուանին արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները (ընդգծուած են յաղթող խումբերը).

- Ասթանա (Ղազ.) - Ճալկիրիս (Լիթ.) 2-1, երթ.0-0
- Նորքեփինկ (Շուէտ.) - Ռոզընայրը (Նորվ.) 3-2, երթ.1-3
- Էֆ91 Տիւտէյանթ (Լիւքս.) - Զարապալ (Ատր.) 1-1, երթ.0-2
- Ֆերենցվարոշ (Րուս.) - Փարթիզան (Ալպ.) 1-1 տուգ.1-3, երթ.1-1
- Թրենշին (Սլովակ.) - Օլիմպիկա (Սլովեն.) 2-3, երթ.4-3
- Սելթիք (Սկոտլ.) - Լիւքսը Ռետ Իմփս (Ճիպ.) 3-0, երթ.0-1
- Տիւամօ Չակրեայ (Խրուաթ.) - Վարտար (Մակեդ.) 3-2, երթ.2-1
- Էֆ Էյի Ռեյքիավիք (Իսլ.) - Տանտոք (Իրլանտա) 2-2, երթ.1-1

Քուֆա Լիպերթաուրեսի Աւարտական Հանգրուան

Ինտիփէնտիէթ - Աթլէթիքո 1-1

Հարաւային Ամերիկայի ակումբներու ամենակարեւոր մրցաշարի՝ Քուֆա Լիպերթաուրեսի ավարտական հանգրուանի երթին, Էքուատորի «Ինտիփէնտիէթ» Տէլ Վայ»ը իր դաշտին վրայ 1-1 հաշիվով հաւասարեցաւ Զոլումպիոյ «Աթլէթիքո Նասիոնալ»ին հետ: Այս արդիւնքը առաւելութիւն կուտայ ջոյնմայիական խումբին դարձի մրցումին համար: Ստորեւ տեսնել արձանագրուած արդիւնքը.

- Ինտիփէնտիէթ Տէլ Վայ (Էք.) - Աթլ.Նասիոնալ (Զոլ.) 1-1 կոլեր.Ա.Միլան 87 - Օ.Պերրիո 36, փոխ.Մ.Թորրես,

Շաբաթավերջի Մրցումներու Յայտագիր

Ստորեւ տեսնել շաբաթավերջի մրցումներու յայտագիրը (փակագիծերու մէջ՝ խումբին դիրքը).

Ուրբաթ 22 Յուլիս 2016

- ՄԻՋԱԶՊԱՅԻՆ ԱՆՈՅՅԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱԿԻ Ա.ՀԱՆԳՐՈՒՄԱՆ**
 Ժամը 15:00 Մանչեսթըր Եունայթըդ - Պորոսիա Տորթմունտ
ԵՐՈՒՊԱՅԻ ՄԻՆՉԵՐ 19 ՏԱՐԵԿԱՆ ԿԻՆԵՐՈՒ ԱՆՈՅՅԱՆ.ՉՏՈՒՄԻ 2-ՐԿ ՀԱՆԳ.
 Ժամը 19:00 Հոլանտա (1) - Նորվեկիա (2)
 Ժամը 19:00 Սպանիա (2) - Աւստրիա (4)
 Ժամը 19:00 Գերմանիա (3) - Չուլցեթիա (1)
 Ժամը 20:00 Սլովակիա (4) - Ֆրանսա (3)
ՍԿՈՎԻՆՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ՉՏՈՒՄԻ 3-ՐԿ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 21:45 Իսթ Սթըրլինկսը (Դ.Դաս.) - Ռեյնլըդ (Ա.Դաս.)

- ԹԵՆԻՍԻ ՈՒՇԵՆԿՈՒՄԵՆԻ ՄՐՑԱՆՈՒՄԻ ԲԱՌՈՐ ՄԵԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒՄԱՆ**
 Ժամը 19:00-Էն սկստալ eurosport 1 կայանէն,
ԶԵԾԵԱՆՈՒՄԻ ՖՐԱՆՍԱՅԻ ԵՐՋԱՎԱՅԻ 19-ՐԿ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 15:10 Ալպերիլէն Լեօ Պերթը, eurosport 1 կայանէն,
ԱՅԵԹԻՉԻ ԱՐԱՄԱՆԴԷ ԼԻԿԱՅԻ ԼՈՒՏՈՆԻ ՄՐՑՈՒՄԻ Ա.ՕՐ
 Ժամը 22:40-Էն սկստալ beinsport կայանէն,

Շաբաթ 23 Յուլիս 2016

- ՄԻՋԱԶՊԱՅԻՆ ԱՆՈՅՅԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱԿԻ Ա.ՀԱՆԳՐՈՒՄԱՆ**
 Ժամը 12:00 Մելպորն Վիքթորի - Եուվելթիս
 Ժամը 19:30 Սելթիք - Լեյքըր Սիթի
ՊԵՆՏԻՆՈՅ ՄԻՖԵՐ ԲԱԺԱԿ
 Ժամը 21:00 Զլոյա Պրիւժ - Սթանտար Լիքթ
ՌՈՒՄԻՆՈՅ ՄԻՖԵՐ ԲԱԺԱԿ
 Ժամը 19:00 ԲԿՄ Մոսկուա - Չեկի Ս.Փերթրապուրկ
ՍԿՈՎԻՆՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱԺԱԿԻ ՉՏՈՒՄԻ 3-ՐԿ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 17:00 Ինվըրնես Զալտոնիլըն (Ա.Դաս.) - Տանտի Եունայթըդ (Ա.Դաս.)
ՊՐԱԶԻԼԻ ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ 16-ՐԿ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 22:00 Բորիթթըր (2) - Ֆիլուէրնես (16)
 Ժամը 00:30 Սանթա Բրուկ (14) - Բորիթթա (19)
ԱՄՆ-Ի ԱՆՈՅՅԱՆՈՒԹԵԱՆ
 Ժամը 06:00 Ռեալ Սոլթ Լէյք (4) - Սան Խոսէ Ըրթըուէյս (8)
 Ժամը 22:30 Փորթլէտ Ռիմպլըդ (6) - Լոս Անճելըս Կալաբի (3)

- ԹԵՆԻՍԻ ՈՒՇԵՆԿՈՒՄԵՆԻ ՄՐՑԱՆՈՒՄԻ ԿԻՍԱՄԱՐՏ.ՀԱՆԳՐՈՒՄԱՆ**
 Ժամը 19:00-Էն սկստալ eurosport 1 կայանէն,
ԶԵԾԵԱՆՈՒՄԻ ՖՐԱՆՍԱՅԻ ԵՐՋԱՎԱՅԻ 20-ՐԿ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ
 Ժամը 15:00 Մեծտէլէն Մորգին, eurosport 1 կայանէն,
ԱՅԵԹԻՉԻ ԱՐԱՄԱՆԴԷ ԼԻԿԱՅԻ ԼՈՒՏՈՆԻ ՄՐՑՈՒՄԻ Բ.ՕՐ
 Ժամը 17:45-Էն սկստալ beinsport կայանէն,

Պասքէթպոլ Եւրոպայի Երիտասարդական Ախոյեանութիւն

Հայաստան Յաղթեց Վրաստանին

Եւրոպայի պասքէթպոլի մինչեւ 20 տարեկան տղոց հաւաքականը Եւրոպայի Բ.դասակարգի իր վերջին մրցումին յաղթեց Վրաստանի հաւաքականին 65-62 հաշիվով: Ամենալաւ նշանակողն էր Արամ Արսլանեանը 18 կետով:

ՀԵՇ Անդրանիկ Սեւան Լիբանանի Պասքէթպոլի Աղջկանց Բ. Դասակարգի Ախոյեան



ՀԲԸՄ ՀԵՇ Անդրանիկ Սեւանի (Սին Էլ Ֆիլ) պասքէթպոլի աղջկանց խումբը, արժանաւորապէս շահեցաւ Լիբանանի պասքէթպոլի Բ. դասակարգի աղջկանց ախոյեանութեան տիտղոսը: Եզրափակիչ հանգրուանի երկրորդ մրցումին, ՀԵՇ Անդրանիկ Սեւանի պասքէթպոլի կազմը, յաջողաբար երկրորդ անգամ ըլլալով պարտութեան մատնեց Անուարը: Մրցումին ներկայ գտնուեցան մեծ թիւով համակիրներ եւ մարզասերներ, որոնց մէջ ՀԵՇ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ Արա Տաքսեանը, Կերրի Նազարեանը, Յակոբ Ընդլընեանը, Պօղոս Վանլեանը եւ Յակոբ Թելվիզեանը, որ միաժամանակ կը գլխավորէր ՀԵՇ Անդրանիկ Սեւանի Գործադիր Վարչութեան կազմը:



Մրցումը տեղի ունեցաւ ՀԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնի «Անդրանիկ» մարզադաշտին մէջ եւ ավարտեցաւ ՀԵՇ Անդրանիկ Սեւանի յաղթանակով՝ 50-43 (կիսախաղ՝ 29-20): Նշենք, թէ նախատեսուած երեք մրցումներէն երկու յաղթանակ արձանագրող կազմը, ինքնաբերաբար պիտի ապահովէր ախոյեանութեան տիտղոսը: Եզրափակիչի առաջին հանդիպումը ավարտած էր ՀԵՇ Անդրանիկ Սեւանի յաղթանակով՝ 54-48: ՀԵՇ Անդրանիկ Սեւան ՎՆԱնուար երկրորդ մրցումը վարեցին միջազգային կարգի իրաւարարներ Նասեր Ապու Ռաշիտը, Մուհամմէտ Ֆաուզին (Յորդանան) եւ Ընրճ Սաատը (Լիբանան): Շնորհիւ այս յաղթանակին, ՀԵՇ Անդրանիկ Սեւան բարձրացաւ Ա. դասակարգ եւ յառաջիկայ մարզական տարեշրջանին պիտի մասնակցի Լիբանանի պասքէթպոլի աղջկանց Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն:

ՀԵՇ Անդրանիկ Սեւան փայլուն արդիւնքներով սկսաւ պասքէթպոլի ախոյեանութեան տարեշրջանը, ութ խումբերէ բաղկացած խմբակին մէջ արձանագրելով եօթ յաղթանակներ: Շնորհիւ այս արդիւնքներուն, մեր աղջիկները անցան ախոյեանութեան «Ֆայնլը Ֆոր»ի հանգրուանը: «Ֆայնլը Ֆոր» հանգրուանին ՀԵՇ Անդրանիկ Սեւան պարտութեան մատնեց ՀԲԸՄ-Պուրճ Համուրը եւ հասաւ եզրափակիչի:

Այս ուրախ առիթով ՀԵՇ-ի Կեդրոնական Վարչութիւնը ջերմապէս կը շնորհաւորէ ՀԵՇ Անդրանիկ Սեւանի պասքէթպոլի աղջկանց խումբը, մարզական կազմի պատասխանատուները եւ ՀԵՇ-ի բոլոր համակիրները: ՀԵՇ Անդրանիկ Սեւան (Սին Էլ Ֆիլ-ի) գլխավոր մարզիչն է Յարութ Գուզուճեանը, իսկ վարչական պատասխանատուն Թոնի Ընլոնոյեանը:



ՀԵՇ ՄԱՍԼՈՅ ԳՐԱՍԵՆԵԿԿ

POLO TRAVEL
 Travel & Tourism

MEA
 To
ARMENIA
YEREVAN

Starting USD **350**
 *taxes excluded

EVERY MONDAY & FRIDAY

HOTLINE : +961-1-258852
 Mobile : +961-3-148248 / +961-3-881944
 E-mail : info@polo-travel.com
 www.polo-travel.com

Bourdj Hammoud - Tripoly Str. - Harboyn Trade Center - Ground Flr.

Շրջանը Դէպի Ո՛ր

«Չարթօնք»-եան Հանդիպումներ

Գ. ԱՐՅԱՆԻ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹԵԱՆ

ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

REPUBLIC OF ARMENIA Կը Զրուցէ՝

Լիբանանի Սօտ Հայաստանի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան

Սամուէլ Մկրտչեան

ARTSAKH (NAGORNO-KARABAKH) REPUBLIC

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի 1 Օգոստոս 2016-ի երեկոյեան ժամը 8:00ին Թէքեան Կեդրոնի, Ա. Յարկի «ՌԱԿ-ի Լսարան»ին մէջ, Ժըմմելի, Պէրոս

ՀՐԱՒԵՐ

ՄԱՅԱԶԴ

Տիկին Ֆրիտա Գարաճեան-Սարգիսեան
 Տէր եւ Տիկին Ատուր եւ Նարին Սարգիսեան եւ զաւակուց
 Տէր եւ Տիկին Աւո եւ Ալին Թիւթիւնեան եւ զաւակները՝ Ռուպինա եւ Երուանդ
 Տէր եւ Տիկին Վահան եւ Միրնա Պատիկեան եւ զաւակները՝ Ռուբէն եւ Դայար
 Տէր եւ Տիկին Ժան եւ Սիւզի Գարաճեան եւ զաւակուց (Ֆրանսա)
 Տէր եւ Տիկին Սեւակ եւ Լիզա Փափազեան եւ զաւակուց (Տուպայ)
 Տէր եւ Տիկին Պերճ եւ Սիւզան Սիսեան եւ զաւակուց (Ֆրանսա)
 Տէր եւ Տիկին Սիւզի Գարաճեան եւ զաւակուց
 Տիար Գրիգոր Գարաճեան եւ զաւակուց
 Տէր եւ տիկին Մերժ եւ Նոնո Սարգիսեան եւ զաւակուց (Իտալիա)
 Տէր եւ Տիկին Ժորժ եւ Սիլիա Սարգիսեան եւ զաւակուց (Միացեալ Նահանգներ)
 Տէր եւ Տիկին Արթուր Մելիք-Սարգիսեան եւ զաւակուց (Միացեալ Նահանգներ)
 Տէր եւ Տիկին Ժոն եւ Այտա Սիւզի (Անգլիա)
 եւ համայն Սարգիսեան, Գարաճեան, Թիւթիւնեան, Պատիկեան, Սիւսեան, Օսգանեան, Փափազեան եւ Պուճիբաճեան ընտանիքները ու համայն ազգականներ կը գոժեն իրենց ամուսնին, հօր, մեծ հօր, քեռայրին, հօրեղբօր, մորեղբօր եւ հարազատին՝

ԱԼՊԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ
 (ծնեալ Պարսկաստան, 1924-ին)

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 19 Յուլիս 2016-ին, իր ընկալարանին մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկարութեան արարողութիւնը պիտի կատարուի Ուրբաթ, 22 Յուլիս 2016-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, Ա. Նշան Մայր եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեային մարմինը պիտի փոխադրուի Ֆորն Շրպպեյի Ազգային գերեզմանատունը եւ պիտի ամփոփուի ընտանեկան դամբարանին մէջ:

Ներկայս ընդունիլ իբրեւ մահազր:

Ցաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան Ա. Նշան Մայր եկեղեցոյ Կարախի եւ Արեգ Նազարեան սրահին մէջ, մինչեւ երեկոյեան ժամը 7:00-ը, ինչպէս նաեւ Շաբաթ, 23 Յուլիսին կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00-ը նոյն վայրին մէջ, իսկ Կիրակի, 24 Յուլիսին հանգուցեային ընկալարանը, Զլեմասո, Թալաթ Ժումպաթ, Ալ Նասիմ շենք, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00-ը: Հեռահայն 01-370499:

Ծանօթ. Կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել Ա. Նշան եկեղեցոյ կամ Ա. Էջմիածնի կրօնատէր տիկնանց համախմբումին:

Դաւանելով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատանք բազմակարծութեան եւ ազատ խօսքի իրաւունքի: Հետեալ թերթի մէջ իրատարուած գրութիւնները անպայման չեն արտայայտէր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպորտ վրիպակներու պարագային, կ'ապաւինինք յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն ներողամտութեան:

Ձեռնարկի անուն	Վայր	Թուական	Ժամ
«Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկ»ի 50-ամեակի Հանդիսութիւն	Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» հանդիսասրահին մէջ	Ուրբաթ 22 Յուլիս 2016	Երեկոյեան 8:00
«Չարթօնք»-եան Հանդիպումներ «Գ. Հանդիպում» Արցախի Հանրապետութեան Խաղաղ Կարգաւորման Հեռանկարներ»	Թէքեան Կեդրոնի, Ա. Յարկի «ՌԱԿ-ի Լսարան»ին մէջ, Ժըմմելի, Պէրոս	Երկուշաբթի 1 Օգոստոս 2016	Երեկոյեան 8:00

Պատրաստեց՝ Մարիա Ե.